ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՈՒՐՑԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Ուրցաձոր համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Ուրցաձոր,(0234)86590 (0234) 86-486, urtsadzor90@gmail.com,
urtsadzor.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 ապրիլի 2018 թվականի N 13

ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետով պահանջով ավագանին որոշեց.
Հաստատել նիստի օրակարգը՝ հետևյալ հաջորդականությամբ,

1.ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ/ՋԵԿ. Գ.ՄԱՐԳԱՐՅԱՆ/
2. ՈՒՐՑԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՋԻՆ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՂՈՐԴՈՒՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ /ՋԵԿ. Ռ.ԱՆԴՐԵԱՍՅԱՆ/
3. ՈՒՐՑԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՍԵՓԱԿԱՆԱՏԻՐՈՋ ԿԱՄ ՏԻՐԱՊԵՏՈՂԻ՝ ԻՐ ՏԻՐԱՊԵՏՄԱՆ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԵՎ ԴՐԱՆ ՀԱՐԱԿԻՑ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏԱՐԱԾՔԻ ՊԱՐՏԱԴԻՐ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ԷՈՒԹՅՈՒՆԸ,ԾԱՎԱԼԸ, ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ /ՋԵԿ. Ա.ՄԵԼՔՈՆՅԱՆ /
4. ՈՒՐՑԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԵՐԻՑ 20,1 ՀԱ ՎԱՐԵԼԱՀՈՂ, 0,69977 ՀԱ ԱՐՈՏԱՎԱՅՐ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 3,294 ՀԱ ԵՎ 0,23057 ՀԱ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ /ՋԵԿ. Ռ.ԱՆԴՐԵԱՍՅԱՆ/
5. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԱՃՈՒՐԴ_ՎԱՃԱՌՔԻ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ, ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ/ՋԵԿ. Ռ.ԱՆԴՐԵԱՍՅԱՆ/
6. ՈՒՐՑԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 5.0 ՀԱ ՎԱՐԵԼԱՀՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ /ՋԵԿ. Ռ.ԱՆԴՐԵԱՍՅԱՆ/

7. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻՑ ԳՈՒՅՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐ ԱՌԱՆՁՆԱՑՆԵԼՈՒ , ԱՃՈՒՐԴ_ՎԱՃԱՌՔԻ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ, ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ /ԶԵԿ. Ռ.ԱՆԴՐԵԱՍՅԱՆ/

Կողմ-5 Դեմ- 0 Ձեռնպահ-0

1. ՍԱՐԳՍՅԱՆ ՌՈՒԶԱՆՆԱ

2. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ ԱՐՏՅՈՄ

3.ԱՌԱՔԵԼՅԱՆ ՄԱՐՈ

4. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԳՈՌ

5.ԲԱԴԱԼՅԱՆ ԱՐՄԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌԱՖԻԿ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՈՒՐՑԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Ուրցաձոր համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Ուրցաձոր,(0234)86590 (0234) 86-486, urtsadzor90@gmail.com,
urtsadzor.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 ապրիլի 2018 թվականի N 14-Ն

ՈՒՐՑԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՋԻՆ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՂՈՐԴՈՒՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <Տեղական ինքնակառավարման մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի պահանջով, համայնքի ավագանին որոշում է.

Հաստատել 2018 թվականի առաջին եռամսյակի բյուջեի կատարման վերաբերյալ հաղորդումը /համաձայն հավելվածի/:

Կողմ-5 Դեմ- 0 Ձեռնպահ-0

1. ՍԱՐԳՍՅԱՆ ՌՈՒԶԱՆՆԱ
2. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ ԱՐՏՅՈՄ
3.ԱՌԱՔԵԼՅԱՆ ՄԱՐՈ
4. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԳՈՌ
5.ԲԱԴԱԼՅԱՆ ԱՐՄԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌԱՖԻԿ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՈՒՐՑԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2018Թ.

Հավելված1

ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ

հազ. դրամ

31.03.2018

ՀՀ	Եկամտատեսակները	Պլանը	Փաստացի	կատ,%
	Ընդամենը եկամուտներ, այդ թվում	122249.934	35204.35	28.80
	1.Հարկեր և տուրքեր, այդ թվում .	15680.90	5709.49	36.41
1/1	Գույքային հարկեր անշարժ գույքից, այդ թվում	6550.90	2413.49	36.84
	Գույքահարկ շենքի և շինությունների, որից	150.90	0.19	0.12
	Ֆիզիկական անձանցից			
	Իրավաբանական անձանցիծ			
	Հողի հարկ, այդ թվում	6400.00	2413.30	37.71
	Ֆիզիկական անձանիցից	6250.00	2323.10	37.17
	Իրավաբանական անձանցիծ	150.00	90.20	60.13
1/2	Գույքահարկ փոխադրամիջոցներից	8700.00	2952.50	33.94
1/3	Ապրանքների օգտագործման և իրացման թույլատվության համար, այդ թվում	430.00	343.50	79.88
	Տեղական տուրքեր, որից			
	Շինությունների շինարարության թույլատվության	70.00	39.40	56.29
	Հիմնական շինությունների համար			
	Ոչ հիմնական շինությունների համար			
	Շենքերի և շինությունների վերակառուցման			
	Շինությունների քանդման թույլտվություն			
	Ծխախոտին խմիչքներիվաճառքի թույլտվություն	300.00	244.10	81.37
	վառելիքի վաճառքի համար	60.00	60.00	100.00
	Արխիվից փաստաթղթեր տրամադրման համար			
	Արտաքին գովազդի համար			
1/4	Ապրանքների մատակարարման և ծառայությունների մատուցման այլ լիազորությունների վճարներ, այդ թվում			
	Պետական տուրքեր, այդ թվում			
1/5	Այլ հարկային եկամուտներ/ տույժեր և տուգանքներ/			
	2.Պաշտոնական դրամաշնորհներ, այդ թվում	81619.10	20404.80	25.00
2/5	Ընթացիկ ներքին դրամաշնորհներ/դոտացիա/	81619.10	20404.80	25.00
	Նպատակային հատկացումներ/սուբվենցիա/ Այլ	0.00	0.00	
	3.Այլ եկամուտներ	19500.00	2560.13	13.13
3/3	Գույքի վարձակալությունից մուտքեր, որից	9000.00	481.80	5.35
	Հողերի վարձակալություն	9000.00	481.80	5.35
3/4	Համայնքի բյուջի եկամուտներ ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից,			
	Պատվիրակված լիազորություններ			
3/5	Վարչական գանձումներ, այդ թվում	10500.00	2078.33	19.79
	Տեղական վճարներ	1100.00	769.68	69.97
	Շենքերի օրինականացման վճարներ			
	Այլ ոչ հարկային եկամուտներ	9400.00	1308.65	13.92
	4. Հողի օտարումից մուտքեր	980.00	2060.00	210.20
	5,Մնացորդը	4469.934	4469.934	
5/1	Վ/Բ	4403.6031	4403.6031	
5/2	Ֆ/Բ	66.3309	66.3309	

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ
ՈՒՐՑԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2018 Թ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԸ31.03.2018

N			ԾԱԽՍԵՐԻ ՀՈԴՎԱԾՆԵՐ ԱՆՎԱՆՈՒՄԸ	2018_թ-ի տարեկան բյուջեն	2018- թ-ի հաշվետու ժամանակաշրջան (Ներառյալ ,I կիսամյակ , 9 ամիս , տարին)			
				պլան	պլան	փաստացի	կատարման %	կատարմա %տարեկա պլանի նկատմամբ
Բաժին	խումբ	դաս	**Ընդամենը**	122249.934		22007.99		18.0
01	1	1	Օրենսդիր և գործադիր մարմիններ,պետական կառավարում	56759.934		14295.14		25.1
01	6	1	Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ (այլ դասերին չպատկանող)	700.0		34.85		4.8
04	1	2	Աշխատանքի հետ կապված ընդհանուր բնույթի հարաբերություններ	960.0		160.0		16.6
04	2	4	Ոռոգում	900.0		440.0		48.9
04	5	1	Ճանապարհային տրանսպորտ	1880.0		430.0		22.8
04	5	5	Խողովակաշարային և այլ տրանսպորտ	970.0		0		0
05	1	1	Աղբահանում	900.0		187.4		20.7
06	4	1	Փողոցների լուսավորում	980.00		979.20		100
8	1	1	Հանգստի և սպորտի ծառայություններ	980.00		0		0
08	2	3	Մշակույթի տներ, ակումբներ, կենտրոններ	20680.0		5062.7		24.4
08	5	1	Հանգիստ, մշակույթ և կրոն (այլ դասերին չպատկանող)	1800.00		200.0		11.0
09	1	1	Նախադպրոցական կրթություն	24000.0		1436.5		5.9
09	2	2	Հանրակրթական ուսուցում	400.0		160.0		40
10	7	1	Սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող)	5440.0		700.0		12.8
11	1	2	ՀՀ համայնքների պահուստային ֆոնդ	4900.0				

Համայնքի ղեկավար՝ Ն. Հակոբյան
Գլխավոր հաշվապահ՝ Հ. Հակոբյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՈՒՐՑԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Ուրցաձոր համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Ուրցաձոր,(0234)86590 (0234) 86-486, urtsadzor90@gmail.com,
urtsadzor.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 ապրիլի 2018 թվականի N 15

ՈՒՐՑԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՍԵՓԱԿԱՆԱՏԻՐՈՋ ԿԱՄ ՏԻՐԱՊԵՏՈՂԻ՝ ԻՐ ՏԻՐԱՊԵՏՄԱՆ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԵՎ ԴՐԱՆ ՀԱՐԱԿԻՑ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏԱՐԱԾՔԻ ՊԱՐՏԱԴԻՐ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ԷՈՒԹՅՈՒՆԸ,ԾԱՎԱԼԸ, ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 36-րդ կետով.ավագանին որոշում է

1.Սահմանել Ուրցաձոր համայնքի վարչական սահմաններում գտնվող անշարժ գույքի սեփականատիրոջ կամ տիրապետողի՝ իր տիրապետման տակ գտնվող անշարժ գույքի և դրան հարակից ընդհանուր օգտագործման տարածքի պարտադիր բարեկարգման էությունը, ծավալը, պայմանները եվ իրականացման կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից տասներորդ օրը:

Կողմ-5 Դեմ- 0 Ձեռնպահ-0

1. ՍԱՐԳՍՅԱՆ ՌՈՒԶԱՆՆԱ
2. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ ԱՐՏՅՈՄ
3.ԱՌԱՔԵԼՅԱՆ ՄԱՐՈ
4. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԳՈՌ
5.ԲԱԴԱԼՅԱՆ ԱՐՄԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌԱՖԻԿ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

Հավելված թիվ 1
Ուրցաձոր համայնքի ավագանու
2018 թ. ապրիլի 17-ի թիվ 15-Ա որոշման

ԿԱՐԳ

Ուրցաձոր համայնքի վարչական սահմաններում գտնվող անշարժ գույքի սեփականատիրոջ կամ տիրապետողի՝ տիրապետման տակ գտնվող անշարժ գույքի և դրան հարակից ընդհանուր օգտագործման տարածքի պարտադիր բարեկարգման էությունը, ծավալը, պայմանները և իրականացումը

1. Սույն կարգով սահմանվում է Ուրցաձոր համայնքի վարչական սահմաններում գտնվող անշարժ գույքի սեփականատիրոջ և /կամ/ տիրապետողի՝ իր տիրապետման տակ գտնվող անշարժ գույքի և դրան հարակից ընդհանուր օգտագործման տարածքի պարտադիր բարեկարգման էությունը, ծավալը, պայմանները և իրականացումը:
2. Պարտադիր բարեկարգումը միջոցների համալիր է, որն ուղղված է համայնքի սանիտարական մաքրման, բարեկարգման, բնակչության ապրելակերպի բարելավման, համայնքի ճարտարապետական տեսքի պահպանման խնդիրների ապահովմանը: Այդ և շատ այլ հարցեր պետք է իրականացվեն անշարժ գույքի պարտադիր նորոգման, ընդհանուր օգտագործման տարածքների պարբերաբար մաքրման, կանաչապատման և բարեկարգման միջոցով:
3. Պարտադիր բարեկարգման օբյեկտներ են բնակելի տներն ու շինությունները, կառույցները, բազմաբնակարան բնակելի շենքերի առաջին հարկերում գտնվող առևտրական, կենցաղային սպասարկման, ինչպես նաև բոլոր այդ կառույցներին և շինություններին հարակից ընդհանուր օգտագործման հողամասերն ու տարածքները:
4. Սույն կարգը տարածվում է Ուրցաձոր համայնքի վարչական սահմաններում տեղակայված /գտնվող/.

   ա/ բազմաբնակարան բնակելի շենքերի առաջին, նկուղային և կիսանկուղային հարկերում գտնվող ոչ բնակելի նշանակության տարածքների /օբյեկտների/ սեփականատերերի կամ տիրապետողների վրա.

   բ/ առանձին տեղակայված հասարակական, արտադրական և այլ ոչ բնակելի նշանակության շենքերի, շինությունների և կառույցների /օբյեկտների/ սեփականատերերի կամ տիրապետողների վրա.

5. Պարտադիր բարեկարգման աշխատանքներն են՝

1/ անշարժ գույքի արտաքին մասի պատշաճ պահպանման և դրան հարակից ընդհանուր օգտագործման տարածքի պարբերաբար մաքրման աշխատանքները և մաքրության պահպանումը.

2/ կանաչապատման համար նախատեսված տարածքների կանաչապատումը և դրանց անհրաժեշտ խնամքն ու պահպանումը.

3/ անհրաժեշտ լուսավորություն՝ անշարժ գույքի մուտքի համար.

4/ թեթև կոնստրուկցիաներով /մետաղյա խողովակ, ցանց, ճաղեր և այլն/ ցանկապատում և դրանց փոխում, փոխարինում.

6. Շինարարության թույլտվություն չպահանջող բարեկարգման աշխատանքներն ապահովում են տարածքների կանաչապատումը, ծառատնկումը, ինչպես նաև բարեկարգման տարրերի վերականգնումը, նորոգումը, փոխումը, փոխարինումը:

7. Բարեկարգման աշխատանքների կազմակերպման համար անշարժ գույքի սեփականատերերի կամ տիրապետողների կողմից կարող են կատարվել տարածքների չափագրում, կազմել անհրաժեշտ աշխատանքների ցանկ, իսկ վերականգնման, նորոգման, փոխարինման աշխատանքների դեպքում՝ թերությունների մասին արձանագրություն:

8. Քաղաքաշինական օրենսդրությամբ նախատեսված սույն կարգով՝ համաձայնեցված նախագծի և շինարարության թույլտվության առկայությամբ միայն կարող են իրականացվել հետևյալ աշխատանքները.

1/ շենքի ճակատի նոր ճարտարապետական տարրերի տեղադրում, դրանց փոխարինում նորով կամ վերացում.

2/ տանիքի ձևի, ծածկույթի նյութի և գույքի փոփոխում.

3/ պատշգամբների բազրիքաճաղերի նկարվածքի և գույնի փոփոխություններ.

4/ բնական քարե շարվածքով իրականացված շենքերի ճակատների նյութի, ֆակտուրայի փոփոխություն և ներկում, ինչպես նաև նոր բացվածքների բացում գոյություն ունեցողների փակում:

9. Գործող ընթացակարգերով սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջող աշխատանքներն իրականացվում են Ուրցաձորի համայնքապետարանի կողմից մշակված ճարտարապետական կամ ձևավորման նախագծին համապատասխան: Նախագիծը մշակվում և տրվում է Ուրցաձորի համայնքապետարանի կողմից անվճար:

10. Ուրցաձորիի համայնքապետարանի կողմից կարգի կատարման նկատմամբ վերահսկողության իրականացման ընթացքում շենքի կամ շինության սեփականատիրոջը կամ տիրապետողին կարող են տրվել ցուցումներ շենքի

ճակատների վերականգնման կամ նորոգման աշխատանքների իրականացման վերաբերյալ, հիմնավորելով դրանց անհրաժեշտությունը և նշելով ժամկետները:

11. Պարտադիր բարեկարգման պահանջներն են՝

1/ խանութների և այլ նմանատիպ օբյեկտների ցուցափեղկերը պետք է սարքավորված և ձևավորված լինեն պատշաճ ձևով և շահագործվեն սահմանված պահանջներին համապատասխան.

2/ մայթերի բարեկարգման դեպքում պետք է կատարվեն հետևյալ պահանջները.

ա/ ապահոված լինի տեսանելի մաքրությունը և անհրաժեշտ թվաքանակով աղբարկղերի առկայությունը,

բ/ ձմռանը պետք է իրականացվի տեղացած ձյան ամենօրյա մաքրումը.

գ/ ձյան տեղումների ընդհատման ընթացքում մայթերի ասֆալտ-բետոնե ծածկերը և /կամ/ սալիկապատված հատվածները պետք է մաբողջությամբ մաքրվեն ձյան և սառույցի կուտակումներից,

դ/ ձյան մաքրման ընթացքում արգելվում է ձյան և սառույցի կույտերը կուտակել ճանապարհի երթևեկելի մասում: Թույլատրվում է միայն ժամանակավորապես կույտերը տեղավորել հասարակական տրանսպորտի կանգառների հետնամասում,

ե/ ճանապարհների, փողոցների եզրաքարերը պետք է ամբողջությամբ մաքրված լինեն ձնից և սառույցից:

12. Ուրցաձոր համայնքի վարչական սահմաններում գտնվող անշարժ գույքի և դրան հարակից ընդհանուր օգտագործման տարածքի պարտադիր բարեկարգումը իրականացնում է անշարժ գույքի սեփականատեր կամ տիրապետող հանդիսացող ֆիզիկական կամ իրավաբանական անձը:

13. Կանաչապատման աշխատանքները ենթակա են պարտադիր կատարման միայն Ուրցաձորի համայնքապետարանի հետ համաձայնեցնելուց հետո:

14. Անշարժ գույքի սեփականատերը կամ տիրապետողը անշարժ գույքի արտաքին ճարտարապետական ցանկացած փոփոխություն համաձայնեցնում է Ուրցաձորի համայնքապետարանի աշխատակազմի հետ:

15. Անշարժ գույքի սեփականատերը կամ տիրապետողը սույն կարգի համապատասխան՝ իր տիրապետման տակ գտնվող անշարժ գույքի և դրան հարակից ընդհանուր օգտագործման տարածքի պարտադիր բարեկարգման աշխատանքներն իրականացնում է ինքնուրույն կամ իր հաշվին՝ մասնագիտացված կազմակերպությունների ներգրավման միջոցով:

16. Այն դեպքում, երբ անշարժ գույքի սեփականատեր կամ տիրապետող են հանդիսանում մի քանի անձ, ապա նրանցից յուրաքանչյուրի մասնակցությունը պարտադիր բարեկարգման աշխատանքներին որոշվում է անշարժ գույքի նկատմամբ սեփականության կամ տիրապետման իրավունքով նրանց մասնակցության բաժնին համամասնորեն:
17. Այն դեպքում, երբ հատկացված հողամասի նկատմամբ սեփականության կամ օգտագործման իրավունքները չեն ենթարկվել պետական գրանցման, ապա պարտադիր բարեկարգման և մաքրման է ենթակա այն տարածքը, որը փաստացի տիրապետվում է անշարժ գույքի տիրապետողի կողմից:
18. Անշարժ գույքի հարակից ընդհանուր օգտագործման տարածքի պարտադիր բարեկարգման աշխատանքների ծավալը որոշվում է՝

1/ կրպակների կամ մանրածախ առևտուր իրականացնող այլ օբյեկտների, բնակչության կենցաղային և այլ սպասարկման օբյեկտների, ինչպես նաև առևտրի այլ օբյեկտների, ավտոտնակների համար՝ հատկացված կամ զբաղեցրած տարածքի պարագծից 5 մետր, կառույցից դուրս՝ մինչև փողոցի երթևեկելի մասի եզրաքարը,

2/ բազմաբնակարան շենքերի առաջին, կիսանկուղային և նկուղային հարկերում գտնվող ոչ բնակելի նշանակության տարածքների համար՝ դրանց զբաղեցրած պարագծով՝ մինչև փողոցի երթևեկելի մասի եզրաքարը,

3/ առանձնատների համար՝ դրանց զբաղեցրած հողամասի պարագծով՝ մինչև փողոցի երթևեկելի մասի եզրաքարը,

4/ արդյունաբերական և շինարարական օբյեկտների համար՝ հատկացված և /կամ/ զբաղեցրած ամբողջ տարածքի պարագծից մինչև փողոցի երթևեկելի մասի եզրաքարը,

5/ առողջապահական և կրթական օբյեկտների համար՝ հատկացված և /կամ/ զբաղեցրած ամբողջ տարածքի պարագծից մինչև փողոցի երթևեկելի մասի եզրաքարը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՈՒՐՑԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Ուրցաձոր համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Ուրցաձոր,(0234)86590 (0234) 86-486, urtsadzor90@gmail.com,
urtsadzor.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 ապրիլի 2018 թվականի N 16

ՈՒՐՑԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԵՐԻՑ 20,1 ՀԱ ՎԱՐԵԼԱՀՈՂ, 0,69977 ՀԱ ԱՐՈՏԱՎԱՅՐ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 3,294 ՀԱ ԵՎ 0,23057 ՀԱ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական Ինքնակառավարման մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 21 -րդ կետով, հիմք ընդունելով Հանրապետության կառավարության 2010 թվականի հունվարի 14-ի թիվ 16 որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության համայնքների վարչական սահմաններում ընդգրկված պետական սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման,
անհատույց (մշտական) օգտագործման, վարձակալության և կառուցապատման իրավունքով տրամադրման կարգի 2-րդ կետով, Ուրցաձոր համայնքի ավագանին որոշեց.

1.Տալ համաձայնություն Ուրցաձոր համայնքի վարչական սահմաններում գտնվող պետական սեփականություն հանդիսացող հողերից 20,1 հա մակերեսով վարելահող հողամասը /կադաստրային ծածկագիր 03-095-0370-0004/վարձակալության տրամադրել:

2. Տալ համաձայնություն Ուրցաձոր համայնքի վարչական սահմաններում գտնվող պետական սեփականություն հանդիսացող հողերից 0,69977 հա մակերեսով արոտավայրը հողամասը /կադաստրային ծածկագիր 03-095-0630-0005/վարձակալության տրամադրել:

3. Տալ համաձայնություն Ուրցաձոր համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող հողերից 3,294 հա մակերեսով արոտավայրը /կադաստրային ծածկագիր 03-075-0115-0101/վարձակալության տրամադրել:

4. . Տալ համաձայնություն Ուրցաձոր համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող հողերից 0,23057 հա մակերեսով արոտավայրը /կադաստրային ծածկագիր 03-095-0631-0021/ վարձակալության տրամադրել:

5.Պետական սեփականություն հանդիսացող հողամասերը տրամադրել վարձակալության 1-ից մինչև 10/տաս/ տարի ժամկետով և վարձավճարի գինը տարեկան սահմանել հողի հարկի չափից ոչ պակաս:

6.Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը տրամադրել վարձակալության 1-ից մինչև 25/քսանհինգ/ տարի ժամկետով և վարձավճարի գինը տարեկան սահմանել հողի հարկի չափից ոչ պակաս:

Կողմ-5 Դեմ- 0 Ձեռնպահ-0

1. ՍԱՐԳՍՅԱՆ ՌՈՒԶԱՆՆԱ

2. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ ԱՐՏՅՈՄ

3.ԱՌԱՔԵԼՅԱՆ ՄԱՐՈ

4. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԳՈՌ

5.ԲԱԴԱԼՅԱՆ ԱՐՄԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌԱՖԻԿ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՈՒՐՑԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Ուրցաձոր համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Ուրցաձոր,(0234)86590 (0234) 86-486, urtsadzor90@gmail.com,
urtsadzor.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 ապրիլի 2018 թվականի N 17

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԱՃՈՒՐԴ_ՎԱՃԱՌՔԻ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ, ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական Ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետով և Հայաստանի Հանրապետության <<Հողային օրենսգրքի>> 67-րդ հոդվածների պահանջներով ավագանին որոշեց.

1.Աճուրդ-վաճառքի կարգով օտարել համայնքային սեփականություն հանդիսացող հետևյալ

ա/ 03-095-0301-0001 ծածկագիրը կրող 0.99106 հա գյուղատնտեսական նշանակության արոտավայրը, մեկնարկային գինը՝ կադաստրային արժեքի չափով:

բ/ 03-095-0311-0001-ից ծածկագիրը կրող 0.08815 հա գյուղատնտեսական նշանակության արոտավայրը, մեկնարկային գինը՝ 50000 / հիսուն հազար/ ՀՀ դրամ:

Կողմ-5 Դեմ- 0 Ձեռնպահ-0

1. ՍԱՐԳՍՅԱՆ ՌՈՒԶԱՆՆԱ
2. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ ԱՐՏՅՈՄ
3.ԱՌԱՔԵԼՅԱՆ ՄԱՐՈ
4. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԳՈՌ
5.ԲԱԴԱԼՅԱՆ ԱՐՄԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌԱՖԻԿ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՈՒՐՑԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Ուրցաձոր համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Ուրցաձոր,(0234)86590 (0234) 86-486, urtsadzor90@gmail.com,
urtsadzor.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 ապրիլի 2018 թվականի N 18

ՈՒՐՑԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 5.0 ՀԱ ՎԱՐԵԼԱՀՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական Ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետով, և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հունվարի 14-ի թիվ 16 որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության համայնքների վարչական սահմաններում ընդգրկված պետական սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման, անհատույց (մշտական) օգտագործման, վարձակալության և կառուցապատման իրավունքով տրամադրման կարգի 2-րդ կետով Ուրցաձոր համայնքի ավագանին որոշեց.

1. Համաձայնություն տալ Ուրցաձոր համայնքի վարչական սահմաններում ընդգրկված պետական սեփականություն հանդիսացող 5.0 հա վարելահող հողամասը օտարելու աճուրդ վաճառքի կարգով:
2. Վերոնշյալ հողամասի օտարման համար մեկնարկային գինը սահմանել կադաստրային արժեքի չափով:

Կողմ-5 Դեմ- 0 Ձեռնպահ-0

1. ՍԱՐԳՍՅԱՆ ՌՈՒԶԱՆՆԱ
2. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ ԱՐՏՅՈՄ
3.ԱՌԱՔԵԼՅԱՆ ՄԱՐՈ
4. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԳՈՌ
5.ԲԱԴԱԼՅԱՆ ԱՐՄԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌԱՖԻԿ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՈՒՐՑԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Ուրցաձոր համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Ուրցաձոր,(0234)86590 (0234) 86-486, urtsadzor90@gmail.com,
urtsadzor.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17. ապրիլ 2018 թվականի N 19

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻՑ ԳՈՒՅՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐ ԱՌԱՆՁՆԱՑՆԵԼՈՒ, ԱՃՈՒՐԴ_ՎԱՃԱՌՔԻ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ, ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով<<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ, Հայաստանի Հանրապետության <<Հողային օրենսգրքի>> 67-րդ կետով, և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 4-ի թիվ 1408-Ն որոշումը ավագանին որոշեց.

1. *Տալ համաձայնություն՝ համայնքային սեփականություն հանդիսացող ներքոնշյալ հողամասերն առանձնացնելու՝ որպես անշարժ գույքի առանձին միավորներ՝*

ա/ 03-095 -0334 ծածկագիրը կրող արդյունաբերական, ընդերքօգտքգործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների 0,58400 հա հողամասը,

բ/ 03-095-0349-0085 ծածկագիրը կրող արդյունաբերական, ընդերքօգտքգործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների 0.286 հա հողամասը,

գ/ 03-095-0335 ծածկագիրը կրող գյուղատնտեսական նշանակության արոտավայր հողամասերից 0.5 հա հողամասը:

2. Վերոնշյալ հողամասերի օտարման համար մեկնարկային գինը սահմանել կադաստրային արժեքի չափով:

3. *Տալ համաձայնություն՝* վերոնշյալ հողամասերն օտարելու աճուրդ վաճառքի կարգով:

Կողմ-5 Դեմ- 0 Ձեռնպահ-0

1. ՍԱՐԳՍՅԱՆ ՌՈՒԶԱՆՆԱ
2. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ ԱՐՏՅՈՄ
3. ԱՌԱՔԵԼՅԱՆ ՄԱՐՈ
4. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԳՈՌ
5. ԲԱԴԱԼՅԱՆ ԱՐՄԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌԱՖԻԿ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ